27
ՀՈՒՆԻՍ
2024

Luys Lnyu®

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

1. ԻՐԱՆՈՒՄ ԱՌԱՋԻԿԱ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ 2

2. ԻՐԱՆՈՒՄ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ 6

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 11

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Էբրահիմ Ռաիսիի և մյուս բարձրաստիճան պաշտոնյաների ողբերգական մահը Իրանի հյուսիս-արևմուտքում՝ ավիավթարի հետևանքով տեղի ունեցավ տարածաշրջանում առանց այդ էլ աննախադեպ լարվածության պայմաններում: Մի կողմից՝ Իսրայելա-պաղեստինյան հակամարտության նոր փուլը, որը մեկնարկեց 2023թ. հոկտեմբերին և տարածաշրջանի գրեթե բոլոր դերակատարներին ստիպեց վերանայել իրենց տարածաշրջանային քաղաքականության առաջնահերթությունները, այժմ հասել է կարևոր հանգրվանի, երբ Իսրայելը մեծ մասամբ լուծել է իր ռազմական խնդիրները Գազայի հատվածում և անկանխատեսելի են Թել Ավիվի հետագա գործողությունները, մասնավորապես՝ Լիբանանի ուղղությամբ: Մյուս կողմից՝ բուն Իրանի և Իսրայելի միջև աննախադեպ էսկալացիան, այդ թվում՝ առաջին անգամ Իրանի ուղղակի հրթիռային հարվածները Իսրայելի տարածքին տեղի էին ունեցել բոլորովին վերջերս, և երկու կողմերի միջև լարվածության աճի միտումը դեռևս պահպանվում է:

Միաժամանակ, լարվածության օջախները պահպանվում են Իրանի համար կենսական նշանակություն ունեցող այլ տարածաշրջաններում՝ Իրաքում, Սիրիայում, Եմենում, Հարավային Կովկասում, Աֆղանստանում, ինչը Թեհրանին ստիպում է որևէ պարագայում չթուլացնել վերջին տասնամյակներում այստեղ կուտակած ազդեցության գործիքակազմը՝ անկախ ներքաղաքական իրավիճակից: Եթե վերոհիշյալին ավելացնենք նաև Իրանում առկա բարդ սոցիալ-տնտեսական իրադրությունը, վերջին տարիներին կրոնական-քաղաքական շրջանակներում հոգևոր առաջնորդի նոր թեկնածուի վերաբերյալ չդադարող կուլիսային քննարկումները, Իրանում և Իրանից դուրս Ռաիսիի և այլ պաշտոնյաների մահվան հետ կապված տարատեսակ կոնսպիրոլոգիաների տարածումը, պարզ կդառնա, որ առաջիկա ընտրություններն իրենց բնույթով և կարևորությամբ յուրահատուկ են:

Հաշվի առնելով Իրանի պետական համակարգի առանձնահատկությունները և հոգևոր առաջնորդի որոշիչ դերակատարությունը երկրի ներքին և արտաքին քաղաքական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում՝ փորձագետների մեծ մասը քիչ հավանական են համարում առաջիկա ընտրությունների արդյունքում Թեհրանի արտաքին և տարածաշրջանային քաղաքականության կտրուկ փոփոխությունը: Փորձագետները համակարծիք են այն հարցում, որ ցանկացած թեկնածուի հաղթանակի պարագայում Թեհրանը տարածաշրջանային հարցերում հիմնականում շարունակելու է այն կուրսը, որը վերջին տարիներին հաջողությամբ առաջ էր տանում Էբրահիմ Ռաիսին՝ հոգևոր առաջնորդի հովանու ներքո: Միաժամանակ, կախված այս կամ այն թեկնածուի հաղթանակից, Իրանի տարածաշրջանային քաղաքականությունը տարբեր ուղղություններում կարող է

որոշակի մարտավարական փոփոխությունների ենթարկվել, ինչը փորձագետներին ստիպում է ուսումնասիրել տարածաշրջանային հարցերի վերաբերյալ հիմնական թեկնածուների մոտեցումները[1]:

Սույն հոդվածի շրջանակում փորձել ենք հասկանալ Իրանում ներկայիս նախագահական ընտրությունների առանձնահատկությունները, գնահատել, թե դրանք ինչպիսի ազդեցություն կունենան վերջինիս տարածաշրջանային քաղաքականության վրա: Վերլուծել ենք նախագահի հիմնական թեկնածուների քաղաքական կենսագրությունը, փորձել ենք հասկանալ, թե ինչպիսին կլինի Իրանի քաղաքականությունը Հարավային Կովկասում՝ առաջին հերթին Հայաստանի նկատմամբ՝ առաջիկա ընտրություններից հետո: Եկել ենք այն եզրակացությանը, որ ցանկացած թեկնածուի հաղթանակի պարագայում տարածաշրջանում Իրանի քաղաքականության շրջադարձային փոփոխություններ պետք չէ ակնկալել, միաժամանակ Հարավային Կովկասում հնարավոր զարգացումների շուրջ Իրանի արձագանքը՝ Արևմուտքի ներկայության առավել ամրապնդում, թուրք-ադրբեջանական էքսպանսիայի ռիսկեր, Իսրայելի ներկայության ընդլայնում, կարող է առավել կտրուկ դառնալ, եթե ընտրությունների արդյունքում իրենց դիրքերն ավելի ամրապնդեն պահպանողական ուժերը:

1. ԻՐԱՆՈՒՄ ԱՌԱՋԻԿԱ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

2024թ. մայիսի 19-ին Իրանի հյուսիս-արևմուտքում տեղի ունեցած ավիավթարի հետևանքով Իրանի նախագահի, արտգործնախարարի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների մահվան փաստի պաշտոնական հաստատումից հետո Իրանի հոգևոր առաջնորդ Այաթոլլա Ալի Խամենեին նախագահի պարտականությունները ժամանակավորապես փոխանցեց առաջին փոխվարչապետ Մոհամմադ Մոխբերին: Իրանի Սահմանադրության համաձայն՝ նման իրավիճակում նոր նախագահի ընտրությունները պետք է տեղի ունենան 50 օրվա ընթացքում, ուստի ընտրությունների անցկացման օր նշանակվեց հունիսի 28-ը: Ավելի ուշ՝ հունիսի 9-ին Իրանի «Սահմանադրության պահապանների խորհուրդը» հաստատեց ընտրությունների 6 մասնակիցների թեկնածությունը՝ պայքարից դուրս թողնելով նախկին նախագահ Մահմուդ Ահմադինեժադին և

[1] "How much will a presidential election reveal about Iran's future?", By Resul Serdar Atas, Published On 7 Jun 2024, https://www.aljazeera.com/news/2024/6/7/how-much-will-a-presidential-election-reveal-about-irans-future (Այցելվել է 28.06.2024թ.):

Մեջլիսի նախկին խոսնակ Ալի Լարիջանիին, ավելի քան 7 տասնյակ այլ թեկնածուների[2]:

Իրանի քաղաքական համակարգում նախագահի դերակատարությունը մի փոքր ավելի բարդ է և զգալիորեն ավելի թույլ, քան աշխարհում հայտնի այլ նախագահական համակարգերի պարագայում: Երկրի գլխավոր քաղաքական դերակատարը և գերագույն հրամանատարը ոչ թե նախագահն է, այլ Գերագույն հոգևոր առաջնորդը, որը որոշիչ ազդեցության լծակներ ունի պետական կառավարման համակարգի և քաղաքական իշխանության տարբեր ճյուղերի նկատմամբ: Նախագահը իրականացնում է Գերագույն հոգևոր առաջնորդի նախանշած քաղաքական կուրսը՝ ապահովելով կառավարության ամենօրյա աշխատանքը, սակայն մեծ չէ նրա վերահսկողական գործիքակազմը ռազմական և անվտանգային համակարգերի նկատմամբ: Միևնույն ժամանակ, հնարավոր չէ թերագնահատել նախագահի կարևոր դերակատարությունը Իրանի քաղաքական համակարգում, քանի որ վերջինս հանդիսանում է երկրի ընտրված կառավարիչը, միաժամանակ մի շարք կարևոր հարցերում հոգևոր առաջնորդի գլխավոր խորհրդատուն է[3]:

Միայն Իրանի վերջին 3 նախագահների օրինակը բավական է հասկանալու համար, թե նրանցից յուրաքանչյուրի քաղաքական մարտավարությունը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հարցերում որքան տարբեր է եղել նախորդից: Եթե Ահմադինեժադը հայտնի էր կոշտ և խարիզմատիկ արտաքին և անվտանգային քաղաքականությամբ, ապա նրան փոխարինած Հասան Ռոհանին Իրանի քաղաքական շրջանակներում հայտնի «ռեֆորմիստական» գաղափարների կրող էր և վերջինիս օրոք է բանակցվել և ստորագրվել միջուկային համաձայնագիրը (Համատեղ համապարփակ գործողությունների պլանը) ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 5 մշտական անդամների, այդ թվում՝ ԱՄՆ-ի հետ: Վերջին նախագահ Ռաիսին «պահպանողական» շրջանակներից էր: Չնայած արտաքին քաղաքական մարտավարության տարբերություններին, բոլոր երեքն էլ ընդհանուր առմամբ առաջ են տարել Խամենեիի կողմից խրախուսվող արտաքին քաղաքական կուրսը:

Հունիսի 28-ի ընտրությունները թերևս կարևոր են նաև այն տեսանկյունից, որ դրանք կարող են էական նշանակություն ունենալ Իրանում հաջորդ Գերագույն հոգևոր առաջնորդի ընտրության հարցում: Նախքան նախագահ Ռաիսիի մահը, իրանական և միջազգային փորձագիտական շրջանակներում կար տարածված տեսակետ, որ վերջինս հանդիսանում է Հոգևոր առաջնորդին փոխարինելու

[2] "A Presidential Death Sends Iranians to the Polls. Here's What to Know.", By Eve Sampson and Alissa J. Rubin, Published June 21, 2024, https://www.nytimes.com/2024/06/21/world/middleeast/iran-presidential-election-what-to-know.html (Այցելվել է 28.06.2024թ.):

[3] 2024 Iranian Presidential Election Tracker, By Nicholas Carl, June 06, 2024, https://www.aei.org/multimedia/2024-iranian-presidential-election-tracker/ (Այցելվել է 28.06.2024թ.):

ամենահավանական թեկնածուներից մեկը[4], ուստի Ռաիսիի մահը կրկին ակտիվացրել է հոգևոր առաջնորդի պաշտոնի ժառանգականության վերաբերյալ կուլիսային քննարկումները: Ալի Խամենեին այժմ 85 տարեկան է, հետևաբար, ամենայն հավանականությամբ, Հոգևոր առաջնորդի պաշտոնի ժառանգականության հարցը կարող է առաջ գալ արդեն նոր նախագահի պաշտոնավարման շրջանում: Խամենեին ինքը նախքան 1989թ. հոգևոր առաջնորդի պաշտոնը ստանձնելը եղել է երկրի գործող նախագահը, ուստի պատահական չէ նախագահի թեկնածուների նկատմամբ փորձագիտական շրջանակների մեծ ուշադրությունը:

Թերևս նաև վերոհիշյալ հանգամանքով է պայմանավորված նախագահական ընտրապայքարից «ռեֆորմիստական» թևի գրեթե բոլոր հայտնի թեկնածուների դուրսմղումը: Ինչպես արդեն նշվեց, «Սահմանադրության պահապանների խորհուրդը» հաստատել է ընտրությունների 6 մասնակիցների թեկնածությունը, որոնցից 5-ը «պահպանողական» շրջանակներից են: Սա պատահական չէ, քանի որ 2021 թվականից երկրի քաղաքական համակարգի բոլոր կառույցներում, այդ թվում՝ խորհրդարանում գերակայում են պահպանողական ուժերը[5]:

Իրանական և միջազգային փորձագիտական շրջանակները նախագահի պաշտոնի համար հիմնական պայքարը կանխատեսում են Մեջլիսի ներկայիս խոսնակ, պահպանողական Մոհամմադ Բաղեր Ղալիբաֆի և Իրանի Ազգային անվտանգության գերագույն խորհրդում հոգևոր առաջնորդի ներկայացուցիչ, առավել պահպանողական հայացքներ ունեցող Սաիդ Ջալիլիի միջև: Թեև այս երկու թեկնածուներն էլ համարվում են հոգևոր առաջնորդի հավատարիմ և մտերիմ գործիչներ, սակայն Ղալիբաֆը ավելի պրագմատիկ և ճկուն քաղաքական գործչի համբավ ունի, այնինչ Ջալիլին հայտնի է ավելի կոշտ հայտարարություններով՝ արտաքին և ներքին տարբեր հարցերի վերաբերյալ[6]: Երկու գործիչներն էլ նախկին

---

[4] Raisi Among Three To Decide Khamenei's Successor, Iran International Newsroom, Friday, 02/23/2024, https://www.iranintl.com/en/202402231332 (Այցելվել է 28.06.2024թ.), Iran Gets a New President and a Supreme Leader in Waiting, Ali Alfoneh, Jun 21, 2021, https://agsiw.org/iran-gets-a-new-president-and-a-supreme-leader-in-waiting/ (Այցելվել է 28.06.2024թ.), Who is Ebrahim Raisi, Iran's next president?, By Maziar Motamedi Published On 19 Jun 2021, Tehran, Iran, https://www.aljazeera.com/news/2021/6/19/who-is-ebrahim-raisi-irans-next-president (Այցելվել է 28.06.2024թ.):

[5] Closing Circles: Iran's Exclusionary 2024 Elections, Crisis Group, 12 MARCH 2024, https://www.crisisgroup.org/middle-east-north-africa/gulf-and-arabian-peninsula/iran/closing-circles-irans-exclusionary-2024 (Այցելվել է 28.06.2024թ.):

[6] "Биполярная конкуренция: умеренно либеральные силы vs радикально консервативные на выборах в Иране", Елена Дунаева, 19 июня 2024 https://russiancouncil.ru/analytics-and-comments/analytics/bipolyarnaya-konkurentsiya-umerenno-liberalnye-sily-vs-radikalno-konservativnye-na-vyborakh-v-irane/ (Այցելվել է 28.06.2024թ.):

զինվորականներ են և լուրջ կապեր ունեն Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) բարձրաստիճան զինվորականների հետ[7]:

Մոհամմադ Բաղեր Ղալիբաֆը Իրանի Մեջլիսի խոսնակի պաշտոնը վերստին ստանձնել է մայիսի 27-ին: Վերջինս Իրան-իրաքյան պատերազմի ժամանակ ծառայել է ԻՀՊԿ հատուկ նշանակության ջոկատում, իսկ հետագայում ստանձնել է ԻՀՊԿ ռազմաօդային ուժերի հրամանատարի պաշտոնը: 2000-ականներին եղել է Իրանի ոստիկանապետը, այնուհետև Թեհրանի քաղաքապետը: Ղալիբաֆը 2 անգամ մասնակցել է Իրանի նախագահական ընտրություններին՝ 2005թ. պարտվելով Ահմադինեժադին, իսկ 2013-ին՝ Ռոհանիին: Վերջինս 2021թ. աջակցել է նախագահ Ռաիսիի թեկնածությանը և նրա պաշտոնավարման ընթացքում եղել է վերջինիս վստահելի գործընկերներից մեկը[8]:



Սաիդ Ջալիլին նույնպես Իրան-իրաքյան պատերազմի մասնակից է, ռազմական գործողությունների ժամանակ նրա աջ ոտքը անդամահատվել է: Ահմադինեժադի նախագահության շրջանում զբաղեցրել է Իրանի Ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղարի պաշտոնը, ինչպես նաև եղել է Արևմուտքի հետ միջուկային գործարքի շուրջ հիմնական բանակցողը: Միջուկային բանակցություններում Ջալիլին հայտնի է եղել կոշտ և անզիջում դիրքորոշմամբ: Երկու անգամ մասնակցել է նախագահական ընտրություններին. 2013թ. պարտվել է Ռոհանիին և ներկայիս հիմնական մրցակից Ղալիբաֆին, իսկ 2021թ. իր թեկնածությունը հանել է՝ հոգուտ նախորդ նախագահ Էբրահիմ Ռաիսիի:

Մասուդ Պեզեշքյանը այս ընտրություններում որոշակի պայմաններում նույնպես կարող է բավականաչափ ձայներ հավաքել՝ հաշվի առնելով վերջինիս

---

[7] How much will a presidential election reveal about Iran's future?, By Resul Serdar Atas, Published On 7 Jun 2024 7 Jun 2024, https://www.aljazeera.com/news/2024/6/7/how-much-will-a-presidential-election-reveal-about-irans-future (Այցելվել է 28.06.2024թ.):

[8] Iran election: Who is in the race and who is likely to reach the finish line?, Syed Zafar Mehdi, 03.06.2024, https://www.aa.com.tr/en/middle-east/iran-election-who-is-in-the-race-and-who-is-likely-to-reach-the-finish-line/3238434 (Այցելվել է 28.06.2024թ.):

էթնիկ (ադրբեջանական) ծագումը և կապերը քրդական շրջանակների հետ, սակայն չի համարվում նախագահի հիմնական թեկնածուներից: Մյուս թեկնածուները՝ Թեհրանի քաղաքապետ **Ալի Ռեզա Զաքանին**, շեհիդների հիմնադրամի ղեկավար **Ամիր Հոսեյն Ղազիզադե Խաշեմին**(ընտրությունների նախօրեին հանել է թեկնածությունը), **Մոսթաֆա Փուրմոհամմադին** նույնպես փորձագետների կողմից չեն դիտարկվում որպես նախագահի պաշտոնի իրատեսական թեկնածուներ, և ամենայն հավանականությամբ ընտրությունների 2-րդ փուլի պարագայում իրենց աջակցությունը կհայտնեն հիմնական թեկնածուներից որևէ մեկին:

Թեև Իրանում ընտրությունների արդյունքում ցանկացած կառավարության ձևավորումից հետո արտաքին և տարածաշրջանային քաղաքականության կտրուկ շրջադարձեր չեն կանխատեսվում, սակայն կախված այս կամ այն թեկնածուի մոտեցումներից և քաղաքական կենսագրությունից՝ կարելի է կանխատեսել արտաքին քաղաքական մարտավարության որոշակի առանձնահատկություններ: Միաժամանակ նոր նախագահի կերպարն ինքնին կարող է շատ խոսուն լինել տարածաշրջանում Իրանի հետագա քաղաքական ընթացքը գնահատելու և կանխատեսելու տեսանկյունից:

2. ԻՐԱՆՈՒՄ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Արտաքին քաղաքական և անվտանգային օրակարգին վերաբերող հարցերը ավանդաբար Իրանի նախագահական ընտրությունների նախընտրական շրջանում ամենաքննարկվող թեմաներն են, ինչը ներկայիս լարված միջազգային իրադրության պայմաններում առավել նկատելի է: Իրանում նախընտրական շրջանում ամենաքննարկվող արտաքին քաղաքական հարցերը հետևյալներն են՝

- Հակամարտությունը Իրանի, նրա դաշնակիցների և Իսրայելի միջև,

- Պատժամիջոցները և լարվածությունը Իրանի և Արևմուտքի միջև,

- Տարածաշրջանում Իրանի հիմնական դաշնակիցների աջակցության հարցը (Եմեն՝ Անսար Ալլահ, Սիրիա, Լիբանան, Իրաք և այլն),

- Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի հետ հակամարտությունը,

- Արաբական երկրների հետ հարաբերությունների կարգավորման օրակարգը,

- Չինաստանի և Ռուսաստանի հետ համագործակցության խորացմանն ուղղված ջանքերը,

- Հարավային Կովկասում ՆԱՏՕ-ի ազդեցության դիմագրավումը, ինչպես նաև թուրք-ադրբեջանական ազդեցության էքսպանսիայի կանխումը:

Վերոհիշյալ հարցերի վերաբերյալ նախագահի գրեթե բոլոր թեկնածուները նախընտրական շրջանում իրենց ելույթներում և հայտարարություններում հիմնականում համանման կարծիքներ և դիրքորոշումներ են հնչեցրել, թեև Արևմուտքի նկատմամբ հակազդեցության, պատժամիջոցների, տարածաշրջանում Իրանի ռազմական ներկայության ամրապնդման և արևմուտքի դիրքերի թուլացման հարցում պարբերաբար ավելի անզիջում և կտրուկ տեսակետներ է հայտնել այս ընտրապայքարի թերևս ամենապահպանողական թեկնածուն՝ Սաիդ Ջալիլին[9]:

Ակնհայտ է, որ անկախ նրանից՝ Իրանում նախագահի ավելի պահպանողական, թե ռեֆորմիստ թեկնածու կընտրվի, ԱՄՆ քաղաքականությունը միջուկային գործարքի և Իրանի նկատմամբ պատժամիջոցների հարցում դժվար թե էական փոփոխությունների ենթարկվի: Երբ ԱՄՆ նախագահ Թրամփը Իրանի նկատմամբ որդեգրեց այսպես կոչված «առավելագույն ճնշման» քաղաքականությունը և դուրս եկավ միջուկային համաձայնագրից, Իրանի նախագահի պաշտոնը զբաղեցնում էր ռեֆորմիստական թևի ներկայացուցիչ համարվող Հասան Ռոհանին[10]: ԱՄՆ-ում առաջիկա նախագահական ընտրություններում Թրամփի հնարավոր հաղթանակի հեռանկարը առավել համոզիչ է դարձնում Իրանում վերջին տարիներին արմատավորված այն ընկալումը, որ ԱՄՆ պատժամիջոցների դեմ պայքարի միակ հնարավոր տարբերակը կոշտ դիրքորոշումն է և արտաքին քաղաքական ու տնտեսական այլընտրանքի փնտրտուքը:

Նախագահի ընտրություններից հետո Իրանի նոր կառավարությունը կշարունակի վերջին տարիներին, հատկապես Ռաիսիի պաշտոնավարման շրջանում, ամրապնդված քաղաքական գիծը՝ միտված Ռուսաստանի և Չինաստանի հետ հարաբերությունների խորացմանը անվտանգային, տնտեսական,

[9] Iran sanctions take centre stage in presidential campaign, By AFP - Jun 25,2024, https://jordantimes.com/news/region/iran-sanctions-take-centre-stage-presidential-campaign (Այցելվել է 28.06.2024թ.):

[10] There are several Iranian presidential candidates, but only one Khamenei might want, By Shay Khatiri, June 21, 2024, https://www.atlanticcouncil.org/blogs/iransource/iran-presidential-election-khamenei-pourmohammadi/ (Այցելվել է 28.06.2024թ.):

քաղաքական ոլորտներում[11]: Թեհրանը կպահպանի իր ակտիվ ներգրավվածությունը ԲՐԻԿՍ-ի, ՇՀԿ-ի, ԵԱՏՄ-ի հետ աշխատանքներում՝ փորձելով մեղմել Արևմուտքի կողմից քաղաքական և տնտեսական մեկուսացման հետևանքները:

Իսրայելա-պաղեստինյան հակամարտության ուղղությամբ Իրանի քաղաքականությունը նույնպես էական փոփոխությունների չի ենթարկվի: Սակայն ավելի կոշտ պահպանողական թեկնածուի հաղթանակի դեպքում Իրանը կարող է հետագայում առավել կտրուկ արձագանքել Իսրայելի գործողություններին: Նախագահ Ռաիսին առաջինն էր, որի պաշտոնավարման ընթացքում Թեհրանը անմիջական ռազմական հարված հասցրեց Իսրայելի տարածքին, այդ թվում՝ փորձարկելով Իսրայելի պաշտպանական համակարգի խոցելիությունը: Առավել կոշտ թեկնածուի ընտրությունը կարող է նոր էսկալացիայի հիմքեր ստեղծել, հատկապես եթե Իսրայելը Լիբանանի Հեզբոլլահ շարժման ուղղությամբ ավելի բաց առճակատման գնա[12]:

Ռաիսիի պաշտոնավարման ընթացքում Իրանը նկատելի հաջողությունների է հասել տարածաշրջանում իր դիրքերի ամրապնդման առումով: Չինաստանի միջնորդությամբ Թեհրանը 2023թ. վերականգնեց հարաբերությունները Սաուդյան Արաբիայի հետ, Սիրիային ցուցաբերած աջակցության արդյունքում Դամասկոսը ի վերջո վերականգնեց տարածաշրջանում իր հեղինակությունը՝ վերադառնալով Արաբական երկրների լիգա[13]: Թեհրանն ակտիվ բանակցություններ է վարում Բահրեյնի հետ դիվանագիտական հարաբերությունների վերականգնման ուղղությամբ[14]:

Արաբական երկրների շրջանում Իրանի նկատմամբ մոտեցումների փոփոխությունը ակներև էր Եմենում ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հրթիռային հարվածների, ինչպես նաև ապրիլին Իսրայելի և Իրանի միջև ռազմական էսկալացիայի ժամանակահատվածում: Օրինակ՝ Սաուդիան Արաբիան և ԱՄԷ-ն փորձեցին սահմանափակել իրենց տարածքի օգտագործումը ամերիկյան

---

[11] Closing Circles: Iran's Exclusionary 2024 Elections, Crisis Group, 12 MARCH 2024, https://www.crisisgroup.org/middle-east-north-africa/gulf-and-arabian-peninsula/iran/closing-circles-irans-exclusionary-2024 (Այցելվել է 28.06.2024թ.):

[12] Out of the shadows: What is next for the Iran-Israel confrontation and the region, Zeynep Alemdar, EDAM, May 2024, https://edam.org.tr/Uploads/Yukleme_Resim/pdf-20-05-2024-14-38-26.pdf (Այցելվել է 28.06.2024թ.):

[13] "Политика ИРИ на Ближнем Востоке: трансформация, динамика и цели", Александр Абросимов, 13 июня 2024, https://russiancouncil.ru/analytics-and-comments/analytics/politika-iri-na-blizhnem-vostoke-transformatsiya-dinamika-i-tseli/ (Այցելվել է 28.06.2024թ.):

[14] СМИ: "Бахрейн и Иран начнут переговоры о нормализации отношений", ТАСС, 24 июня, 2024, https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/21177811 (Այցելվել է 28.06.2024թ.):

զինվորականների կողմից՝ խուսափելու համար սեփական տարածքում պատասխան հրթիռային հարվածների հեռանկարից[15]:

Իրանը Ռաիսիի պաշտոնավարման շրջանում ազատ առևտրի համաձայնագիր է ստորագրել ԵԱՏՄ հետ, խորացրել հարաբերությունները ՌԴ հետ, ինչպես նաև ակտիվացրել է երկխոսությունը տարածաշրջանի երկրների՝ Թուրքիայի, Հայաստանի, Ադրբեջանի, Պակիստանի, Հնդկաստանի հետ: Վերոհիշյալ թեկնածուներից ցանկացածի հաղթանակի դեպքում Իրանի տարածաշրջանային քաղաքականության այս ուղղությունները կմնան անփոփոխ, քանի որ ընդհանուր առմամբ բխում են վերջինիս երկարաժամկետ շահերից:

Հարավային Կովկասում Իրանի քաղաքականությունը նույնպես ընտրությունների արդյունքում էական փոփոխությունների չի ենթարկի: Ռաիսիի պաշտոնավարումը համընկավ մեր տարածաշրջանում բուռն զարգացումների հետ. Ադրբեջանի կողմից Արցախի վերջնական օկուպացիան, Հայաստանի նկատմամբ տարածքային նկրտումներն ու սահմանային սադրանքները, Անկարայի և Բաքվի կողմից այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» վերաբերյալ ռազմատենչ հայտարարություններն ու հավակնությունները, «Արևմտյան Ադրբեջան» և «Հարավային Ադրբեջան» տերմինների շուրջ շահարկումները Իրանի իշխանության տարբեր բարձրաստիճան ներկայացուցիչներին ստիպում էին պարբերաբար սթափեցնող հայտարարություններով հանդես գալ և ընդգծել այս հարցում Թեհրանի կարմիր գծերը:

Սակայն, եթե ի սկզբանե Ռաիսիի կառավարությունը շատ կոշտ էր արձագանքում Ադրբեջանի սադրանքներին՝ ընդհուպ զորավարժությունների և հասցեական հայտարարությունների տեսքով, ապա Հայաստանում արևմուտքի դերակատարության ամրապնդման, մասնավորապես՝ եվրոպական դիտորդական առաքելության տեղակայումից հետո Թեհրանը որդեգրեց Ադրբեջանի հետ սուր հարցերը երկխոսությամբ կարգավորելու մարտավարություն[16]: Ռաիսիի մահը դժվար թե արմատապես փոխի այս ուղղությամբ Իրանի քաղաքականությունը, սակայն կարելի է ակնկալել, որ ավելի անզիջում, պահպանողական թեկնածուի հաղթանակը առավել կկոշտացնի Իրանի հակազդեցությունը Թուրքիայի և Ադրբեջանի ծավալապաշտական ծրագրերին, միաժամանակ Իրանը ավելի անհանդուրժողական կլինի տարածաշրջանում Արևմուտքի դիրքերի

[15] Спецназ наготове: как война в Газе вернула США на Ближний Восток, Игорь Субботин, 17 июня 2024, https://russiancouncil.ru/analytics-and-comments/analytics/spetsnaz-nagotove-kak-voyna-v-gaze-vernula-ssha-na-blizhniy-vostok/ (Այցելվել է 28.06.2024թ.):

[16] “Why Iran's presidential elections are important for Türkiye and the region”, TRT World, June 2024, https://www.trtworld.com/magazine/why-irans-presidential-elections-are-important-for-turkiye-and-the-region-18170085 (Այցելվել է 28.06.2024թ.):

ամրապնդման հարցում[17]: Այս առումով ՀՀ ներկայիս կառավարության արտաքին քաղաքական կուրսը կարող է նոր խնդիրներ առաջացնել Իրանի հետ հարաբերություններում:

Քիչ հավանական է, որ Թեհրանը արմատական վերանայման ենթարկի իր հարաբերոթյունները Հայաստանի հետ, համենայն դեպս քանի դեռ Հայաստանի կառավարությունը սեփական նախաձեռնությամբ անդառնալի հարված չի հասցրել երկկողմ հարաբերություններին: Նման ռիսկեր կարող են առաջանալ, եթե Երևանը ՆԱՏՕ-ին և այլ արևմտյան կառույցների անդամակցության քաղաքական կուրս որդեգրի, կամ ընդլայնի իր տարածքում Արևմուտքի ռազմաքաղաքական ներկայությունը: Նախկինում Իրանի տարբեր բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում՝ Հոգևոր առաջնորդ Խամենեին, հանդես են եկել հայտարարություններով, որտեղ անընդունելի են համարել տարածաշրջանում արտատարածաշրջանային, առավել ևս արևմտյան ներկայության ամրապնդմանն ուղղված քայլերը: Իրանում ավելի պահպանողական թեկնածուի հաղթանակը այս հարցում Թեհրանի հռետորաբանությունը ավելի անզիջում կդարձնի:

Իրանի նոր կառավարությունը կշարունակի Հարավային Կովկասում Իսրայելի ներկայությունը սահմանափակելուն ուղղված ջանքերը: Այս առումով Բաքվի և Թեհրանի միջև հակասությունները կպահպանվեն, և կախված Իրան-Իսրայել հակամարտության հետագա էսկալացիայից, կարող են ավելի սահմանափակել Ադրբեջանի՝ մանևրելու հնարավորությունները[18]: Թեհրանը կշարունակի բոլոր հնարավոր քաղաքական միջոցներով այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» շուրջ թուրք-ադրբեջանական ծրագրերը տապալելու քաղաքականությունը: Հայտնի չէ, թե որքանով Թեհրանը պատրաստ կլինի իր շահերը Հարավային Կովկասում պաշտպանել ընդհուպ ռազմական միջոցներով, սակայն հստակ է, որ նոր նախագահը հետ չի նահանջի դեռևս Ռաիսիի պաշտոնավարման շրջանում Իրանի կողմից ընդգծված կարմիր գծերից[19]:

---

[17] Iranian President's Death Casts Shadow on Future of South Caucasus Publication : Eurasia Daily Monitor Volume: 21 Issue: 78 By: Paul Goble May 21, 2024, https://jamestown.org/program/iranian-presidents-death-casts-shadow-on-future-of-south-caucasus/ (Այցելվել է 28.06.2024թ.):

[18] Challenges in Azerbaijani-Israeli Strategic Relationship After October 7 Publication: Eurasia Daily Monitor Volume: 21 Issue: 90 By: Vali Kaleji June 12, 2024, https://jamestown.org/program/challenges-in-azerbaijani-israeli-strategic-relationship-after-october-7/ (Այցելվել է 28.06.2024թ.):

[19] "The Death of Raisi—and Iranian Influence in the Caucasus", by Andrew Bonney, June 10, 2024, https://nationalinterest.org/feature/death-raisi%E2%80%94and-iranian-influence-caucasus-211373 (Այցելվել է 28.06.2024թ.):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի համար Իրանի նախագահական ընտրությունների մանրակրկիտ ուսումնասիրությունն ու վերլուծությունը կարևոր է մի կողմից՝ հարավային բարեկամի միջնաժամկետ և երկարաժամկետ զարգացման հեռանկարը հասկանալու, մյուս կողմից՝ վերջինիս արտաքին ու տարածաշրջանային քաղաքականությունը ավելի կանխատեսելի դարձնելու տեսանկյունից: Իրանում այս ընտրությունները տեղի են ունենում երկրի և տարածաշրջանի համար ողբերգական, բայց և կարևոր, շրջադարձային ժամանակաշրջանում, և այն, թե ինչպիսի ներքաղաքական վերադասավորումներ տեղի կունենան հարևան երկրում, պետք է կանխորոշի Թեհրանի վարքագիծը առաջիկա տարիներին: Մի բան ակնհայտ է, որ Իրանում ցանկացած անկայունություն կարող է ողբերգական հետևանքներ ունենալ տարածաշրջանի և Հայաստանի համար, ուստի Թեհրանում անցնցում ներքաղաքական վերադասավորումները բխում են Հայաստանի շահերից:

Ընդհանուր առմամբ, անկախ նրանից, թե որ թեկնածուն ի վերջո կստանձնի նախագահի պաշտոնը, Թեհրանը Հարավային Կովկասում կշարունակի վերջին տասնամյակներին հոգևոր առաջնորդ Խամենեիի ուղենշած հավասարակշռված քաղաքական գիծը: Հաշվի առնելով տարածաշրջանային հարցերի ճնշող մեծամասնության դեպքում Իրանի և Հայաստանի շահերի համընկնումը, կարելի է ենթադրել, որ երկու երկրների միջև հարաբերությունների բնականոն զարգացումն այլընտրանք չունի: Իրանի և ԵԱՏՄ միջև ազատ առևտրի համաձայնագրի ստորագրումը, Իրան-ՌԴ հարաբերությունների վերջին տարիների դրական զարգացումները նպաստավոր պայմաններ են ստեղծում երկկողմ տնտեսական հարաբերությունների ակտիվացման համար:

Միաժամանակ, Իրանում պահպանողական ուժերի դիրքերի ամրապնդումը, մյուս կողմից՝ Արևմուտքի հետ հակադրության խորացումը, հատկապես ԱՄՆ-ում Թրամփի իշխանության վերականգնման դեպքում, Հայաստանի համար կսահմանափակեն Արևմուտքի և Իրանի միջև մանևրելու հնարավորությունները:

Հայաստանի կառավարությունը պետք է Իրանում ընտրություններից անմիջապես հետո հետամուտ լինի երկկողմ օրակարգի սառեցված ռազմավարական ծրագրերը վերագործարկելու, վերջին տարիներին կուտակված տարաձայնությունները հարթելու և համատեղ նոր ծրագրեր առաջ քաշելու հարցերում: Մասնավորապես, պետք է ակտիվացնել աշխատանքները Իրան-Հայաստան երրորդ էլեկտրահաղորդման գծի կառուցման ուղղությամբ, նոր թափ հաղորդել Հյուսիս-հարավ նախագծին, վերսկսել բանակցությունները համատեղ ՀԵԿ-երի կառուցման, ռազմական ոլորտում փոխգործակցության և այլ

ուղղություններով: Անկախ նրանից, թե ով կդառնա Իրանի հաջորդ նախագահը, երկու երկրներն ունեն համընկնելի կենսական շահեր տարածաշրջանային հարցերի վերաբերյալ, ուստի պետք է ամեն ջանք գործադրել, այդ շահերը համադրելու և հակասություններից խուսափելու համար՝ առնվազն բացառելով սեփական նախաձեռնությամբ Իրանի հետ հարաբերություններում արհեստական խոչընդոտներ ստեղծելու վարքագիծը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: